ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/98

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 19.08.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 20.08.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/79 համարի ծածկագիրը, իսկ 28.08.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/79 համարի ծածկագրով բողոքի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/98 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ն 19.08.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ–ն՝ ներկայացնելով 587 431 633.63 ՀՀ դրամ գնային առաջարկ /ընդհանուր գին/:

Մասնավորապես, <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է բողոքին).

Ուսումնասիրելով ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ–ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /դրամներով և թվերով/	Շահույթ /դրամներով և թվերով/	ԱԱՀ** /դրամներով և թվերով/	Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում	489 526 362.36		97 905 272.27	587 431 633.63

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության (կցվում է բողոքին) 1-ին կետի համաձայն՝ արձանագրել է, որ <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ <<Ինքնարժեք>> և <<ԱԱՀ>> սյունակների միայն թվերով գրված արժեքների հանրագումարը չի համապատաս-խանում <<Ընդհանուր գինը>> սյան մեջ դրառերով և թվերով լրացված արժեքին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված N 526-Ն որոշման /այսուհետև Կարգ/ 32-րդ կետի 2-րդ մասով սահմանվում է

- 2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

- Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

- Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

- Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

- ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

- բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

- գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով բաց մրցույթին՝ ներկայացնելով 587 431 633.63 ՀՀ դրամ գնային առաջարկ /ընդհանուր գին/:

Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ <<Ինքնարժեք>> և <<ԱԱՀ>> սյունակների միայն թվերով գրված արժեքների հանրագումարը չի համապատասխանում <<Ընդհանուր գինը>> սյան մեջ տառերով և թվերով լրացված արժեքին:

Ըստ երույթին, խնդիրը կայանում է նրանում, որ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի թվերը գումարելիս ստացվում է ընդամենը 1 ՀՀ դրամի տարբերություն:

Տեսականորեն կարելի է պատկերացնել, որ գնահատող հանձնաժողովը նկատի ունենալով այս 1 ՀՀ դրամի խնդիրը, որի արդյունքում ընդհանուր գնի մեջ արձանագրվել է մեկ դրամի տարբերություն, արձանագրել է, որ սխալ է հաշվարկվել գնային առաջարկը:

Մասնավորապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Մինչդեռ գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, ցանկանում ենք հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք

ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի կողմից <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ անբավարար գնահատելու որոշումը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ գնահատող հանձնաժողովի կողմից <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Ելնելով վերոշարադրյալ նորմի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Հանձնաժողովը <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս, հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված որոշմամբ խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Արդյունքում պատվիրատուն ստիպված է լինելու նշված մրցույթի արդյունքում պայմանագիր կնքել ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ, ինչը, մեր կարծիքով, էական վնաս կպատճառի նրա բնուջեին՝ ներկայիս ծանր տնտեսական պայմաններում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Վերը նշված բողոքի վերաբերյալ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներկայացնում է հետևյալ լրացուցիչ հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝

- *2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.*
- *3-րդ ենթակետի համաձայն շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ:*

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկում ընդամենը 1 ՀՀ դրամի տարբերության առկայության պայմաններում հայտը ենթակա չէր մերժման:

Վերոհիշյալ անհամապատասխանությունը պայմանավորված է եղել գնային առաջարկում և ծավալաթերթ-նախահաշվում նշված ինքնարժեքի գների միջև առկա տարբերությամբ: Մասնավորապես, գնային առաջարկում որպես ինքնարժեք նշվել է 489 526 362.36 ՀՀ դրամ, իսկ ծավալաթերթ-նախահաշվում ինքնարժեքը նշված է 489 526 361.36 ՀՀ դրամ:

Հատկանշական է, որ նմանատիպ գործով նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի կատարումն ՀՀ վարչապետի 01/06/2020թ. թիվ 02/16.4/26288-2020 հանձնարարականի (կցվում է) հայտնել է, որ գնային առաջարկում առկա 1 ՀՀ դրամի տարբերությունը՝ պայմանավորված գնային առաջարկում և ծավալաթերթ-նախահաշվում առկա անհապատասխանությամբ, հայտի մերժման հիմք չէ:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է դադարեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի մեկ այլ լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Վերը նշված բողոքի վերաբերյալ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներկայացնում է հետևյալ լրացուցիչ հիմնավորումները և լրացուցիչ պահանջը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով բաց մրցույթի Հրավերի (կցվում է) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հրավերով ընդհանրապես չի նշվել, նախատեսվել, թե Ընթացակարգով ինչ գնման առարկա ԳՄԱ կոդ է նախատեսվել, որով հնարավոր կլինի նույնականացնել Ընթացակարգով նախատեսված աշխատանքները՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2020թ. գնումների պլանով նախատեսված առողջապահության հետ կապված շենքերի կառուցման աշխատանքների տողի՝ ինչ ԳՄԱ կոդով է նախատեսվել:

Ավելին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որևէ կերպ չի կարող հիմնավորել, թե ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2020թ. գնումների պլանում (կցվում է)

հրապարակված առողջապահության հետ կապված շենքերի կառուցման աշխատանքների որ ԳՄԱ կոդի տողն է նույնականացվում ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով բաց մրցույթի Հրավերով սահմանված աշխատանքների հետ, որի դեպքում միայն պարզ կլինի, թե ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքերի, թե ոչ, որի արդյունքում կստացվի, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. ոիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Այսպիսով, առանց Հրավերում նշված CPV կոդի՝ հնարավոր չէ հաստատել, որ տվյալ գնման ընթացակարգը նախատեսված է գնումների պլանով և պատշաճ ձևով հրապարակված է, ուստի և բացակայում է այդ գնման իրավական հիմքը:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից գրեթե նմանատիպ գործի շրջանակներում արդեն իսկ քննվել են բազմաթիվ ընթացակարգեր: Օրինակ՝ թիվ ՍՑ-ՆԳ-2020/74 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի, ուստի հնարավոր չէ արձանագրել Ֆ/Մ էդգար Հովակիմյանի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ոատիև գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ որոշեցի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.04.2020թ. թիվ 26/26-1/5124-2020 գրությամբ Ֆ/Ա էդգար

Հովակիմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

Կամ

2. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 21.08.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/12496-2020 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 25.08.2020թ.-ին ներկայացված թիվ 02/16.4/6626-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Զեթ-Պրոֆիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից ներկայացված բողոքը տեղեկացնում եմ, որ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 13-ի N 2-3 արձանագրության հիման վրա մերժել է ընկերության հայտը՝ պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն գտնում է, որ ընկերության հայտը գնահատվել է սահմանված կարգով և վերջինիս կողմից ներկայացված բողոքն անհիմն է ու ենթակա է մերժման:

Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ն:

iii. «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքներ	489 526 362.36		97 905 272.27	587 431 633.33 հինգ հարյուր ութսունյոթ միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր երեսուներեք դրամ վաթսուներեք լումա

iv. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.08.2020թ.-ի նիստի թիվ 2.2 արձանագրության.

- 1.1-րդ կետի համաձայն՝ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ը լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ բացակայում է մանրամասն տեղեկատվությունը առաջարկվող սարքավորումների կամ արտադրողների, կամ մոդելների կամ տեխնիկական բնութագրերի վերաբերյալ:

- 1.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 13.08.2020թ.-ի թիվ 2-3-րդ արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշել է «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «Ինքնարժեք» և «ԱԱՀ» սյունակների միայն թվերով գրված արժեքների հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ.-ին ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացած «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ն գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքներ	489 526 362.36		97 905 272.27	587 431 633.33 հինգ հարյուր ութսունյոթ միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր երեսուներեք դրամ վաթսուներեք լումա

Հանձնաժողովի 13.08.2020թ.-ի թիվ 2-3-րդ արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշել է «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «Ինքնարժեք» և «ԱԱՀ» սյունակների միայն թվերով գրված արժեքների հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքին:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու

գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հաշվարկը չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ սխալ է հաշվարկվել մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը՝ հետևաբար սխալ է ներկայացվել պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 97 905 272.47 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված 97 905 272.27 ՀՀ դրամի փոխարեն /489 526 362.36 * 20%/՝ որպիսի պայմաններում փոխվում է նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը, որը կազմում է 587 431 634.83 ՀՀ դրամ, ինչի արդյունքում «Ինքնարժեք» և «ԱԱՀ» սյունակների միայն թվերով գրված արժեքների հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված արժեքի գումարին: «Ինքնարժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի և «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված արժեքի գումարի միջև առկա է 1.3 ՀՀ դրամ գումարի չափով տարբերություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում «Ինքնարժեք», «ԱԱՀ» սյունակների և «Ընդհանուր գինը» սյունակում առկա գումարների չափի սխալ հաշվարկելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն՝ ոչ ենթակա շտկման, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից պահպանվել է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքի լրացմամբ նշված այն հանգամանքին, որ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերով չի նշվել ԳՄԱ կոդը, ինչի արդյունքում

հանձնաժողովը չի կարող հիմնավորել, թե ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2020թ.-ի գնումների պլանում հրապարակված՝ առողջապահության հետ կապված շենքերի կառուցման աշխատանքները որ ԳՄԱ կոդի տողի հետ է նույնականացվում՝ մրցույթի հրավերով սահմանված աշխատանքների հետ, ապա Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ որպես Մրցույթի ԳՄԱ կոդ նշվել է 45211250 կոդը՝ որը նույնականացվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հետ, ինչը հաստատվել է նաև Պատվիրատուի կողմից 22.05.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/98 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**